

Կը քշի զգիւթան էդա արտը մէջ.

է', ամառուն չուր գետըն ի, չէթին ի¹, դեօռ¹ ի.

Գիչ ի մնացիր արա պոծընի.

Կըլշի ձին շաա ի քրտընի ի.

Կէջնի տակ, յիւր քեաֆիկ² կառնի.

Ձիու քրտինք աղէկ մը կը սրբի, կը թուղնի.

Ձին կերթայ կանաչը մէջ կէրեծայ:

267. Դաւիթ ձեռ կը թլի:

Գիւթնի գեօրծալարն³ կը բռնի.

Կը քեշի, տանի էն գլեօխ, կը բիրի էն գլեօխ.

Ձիւր մանճկալ կգեայ, զարտ կը պոծըցի:

Մանճկալ կգեայ, կը տիսնայ, մնայ շիւար:

268. Դաւիթ կըսի.—Մա՛նճկալ, քիւ արա պոծա՛ւ:

Կըսի.—Խա՛, կանանչիս, պոծար:

Կըսի.—Դէ՛, մնացիր բարեօլ, իս տ' էրթամ:

Կըսի.—Կարբ՛ճ տղա՛, էրի՛, էրթանք տուն, խաց կի, նուր

գնա՛, մկայ էլի քեաղցացիր իս:

269. —Ձէ, կըսի, տուն չըմ իգեայ:

Կըսի.—Վուր տուն չըս իգեայ, կանգնը.

Ճամբըիմ, խաց բիրիմ, ճամբախ չանութանաս:

—Մանճկալ, կըսի Դաւիթ.

Վուր սկօն ի. իս իմ ձին տանիմ Բանտը Մահու մէջ կը

լուամ՛.

Ձիւր իս իմ ձին լուամ, կգեամ:

270. Դաւիթ զձին կը տանի գետու մէջ թամիզմ կը լուայ,

Կըլնը զին կը դնի վար քեամկին:

Ձիու զօլանքտիր աղէկ մը կը քեշի կապի.

Կեամ կը դնի բիրան, կը խիծնի կգայ,

Կառնի զխաց, կընկնի ճանբախ, կերթայ:

Գինաց, գինաց, խարցըցիլեօլ խասաւ Խոյ քեաղաք:

271. Վուր խասաւ Խոյ, խարցըցից.

—Խանտիւթ խաթիւնը տուն սըն ի:

Մէկ մարդ յընցաւ յիւջե, տարաւ, շանց տուից.

Դաւիթ էսաց.—Դիւռ բացէք: Դիւռ չբացին:

272. Դաւիթ զարկից, դիւռ ջարդից, մտաւ նիրս:

Դիւռ վուր բացից, ըրշկից քեառսուն ձի կապուկ ի.

Յըմենի յեռջիւ գեարը լցած ի. կեօ կուտին.

Դաւիթ զիւր ձին էլ տարաւ էն ձիանքտիրու մէջ.

1. Թրք.—Դուար:

2 Վերնաղգեստ կարծ եւ անձեւ: